ԿԱՐՃԻՔ

ԳԱՅԱՆԵ ՍԼԱՎԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ 1920-1950-ԱԿԱՆ ԹԹ.» Է.00.01 «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տասնամյակներ շարունակ անփոփոխ է մնում Լեռնային Ղարաբաղը (Արցախը) հայաթափելու, հայկական երկրամասն ամբողջությամբ նվաճելու թուրք–ադրբեջանական ազգայնամոլական, ցեղասպան քաղաքականությունը: Եվ եթե խորհրդային ժամանակներում դա իրականցվում էր «խաղաղ» մեթոդներով, ապա ներկայումս դարձյալ իրականացվում է թշնամու ռազմական ներխուժման, ուժի սպառնալիքի և շրջափակման միջոցով: Սակայն, ինչպես նախկինում, արցախահայությունը շարունակում է դիմակայել և չհանձնվել: Ուստի Լեռնային Ղարաբաղի (ԼՂԻՄ–ի) 1920-1950-ական թթ. ժողովրդագրական գործընթացների հետազոտությանը նվիրված սույն թեկնածուական ատենախոսության արդիականությունը առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ շարունակելով անասելի դժվարությամբ հաղթահարել վերջին տարիների ողբերգական իրադարձությունների ծանր հետևանքները արցախահայությունը շարունակում է ապրել և արարել սեփական բնօրրանում, պահպանելով պետականությունը: Վերջինիս հռչակման համար հիմքերը գալիս են խորհրդային առաջին տարիներից, երբ Լեռնային Ղարաբաղը թեև անօրեն դուրս մնաց Հայաստանի Խորհրդային հանրապետության կազմից, բայց ի վերջո ստացավ ինքնավար մարզի կարգավիճակ ԽՍՀՄ կազմում: Սակայն, դա նույնպես դյուրին գործընթաց չէր: Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները ամենևին էլ չէին շտապում կյանքի կոչել Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տրամադրելու մասին ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի հայտնի որոշումը, ավելին՝ ԱդրԿ(բ)Կ կենտկոմի կազմբյուրոյի և քաղբյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 26-ի նիստում որոշվում է. «Խնդրել Կավբյուրոյին, որպեսզի վերանայի Լեռնային Ղարաբաղն առանձնացնելու մասին իր որոշումը, իսկ մինչ այդ ինքնավարություն չտրամադրել»: Այսպիսով, Ադրբեջանի հեռահար նպատակն էր. առժամանակ մոռացության մատնել խնդիրը, իսկ հետագայում հասնել նրան, որպեսզի երկրամասը և տեղի հայ բնակչությունը տարալուծվեն ԱդրՍԽՀ վարչական շրջանների մեջ: Սակայն Խորհրդային Հայաստանի և Անդրդաշնության ղեկավարության, մասնավորապես՝ Ալեքսանդր Մյասնիկյանի հաստատակամ և հետևողական ջանքերի շնորհիվ Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները ստիպված էին երկու տարվա համառ դիմադրությունից հետո նահանջել և հանրապետության կենտգործկոմի 1923 թ. հուլիսի 7-ի դեկրետով

կազմավորել «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը» (ԼՂԻՄ), հետագայում հաստատել մարզի Սահմանադրությունը և վարչա–տարածքային սահմանները:

Գայանե Հովհաննիսյանի ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը (184 համակարգչային էջ) ունի կուռ կառուցվածք, գրագետ և սահուն լեզվաոճական շարադրանք: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (ութ ենթագլուխներով), եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, նաև հավելվածից:

Ատենախոսն իր առջև խնդիր է դրել վեր հանել և բացահայտել Լեռնային Ղարաբաղում, ԼՂԻՄ-ում Խորհրդային Ադրբեջանի իրականացրած ժողովրդագրական քաղաքականության դրսևորումներն ու հետևանքները: Ներկայացնել քննարկվող ժամանակաշրջանում մարզի բնակչության թվաքանակը, տեղաբաշխումը, էթնիկական և սեռային կազմը, տարիքային կառուցվածքը և այլն: Բացահայտել ժողովրդագրական մի շարք գործընթացների փոխկապակցվածությունը մարզի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական գործընթացների հետ:

Ուսումնասիրությունում կիրառվել են ժողովրդագրական գործընթացների վերլուծության վիճակագրական և մաթեմատիկական մեթոդները, վերլուծական-քննական մեթոդը՝ արխիվային փաստաթղթերի, մասնագիտական գրականության տեղեկությունների ուսումնասիրության ժամանակ: Նկարագրական մեթոդի միջոցով ներկայացվել են ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացները պայմանավորող ռազմաքաղաքական, հասարակական, սոցիալ-տնտեսական գործոնները, բնակչության հիմնական ժողովրդագրական հատկանիշները: Հետազոտությունում օգտագործվել է նաև վիճակագրական տվյալների վիզուալացման գծանկարային մեթոդը:

Ներածությունում ներկայացված են ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, հետազոտության առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, թեմայի աղբյուրագիտական հենքն ու ուսումնասիրվածության աստիճանը: Աշխատության համար ուղենշային սկզբնաղբյուրներ են հանդիսացել 1926, 1939 և 1959 թթ. համամիութենական մարդահամարների տպագիր արդյունքները: Տպագիր վիճակագրական սկզբնաղբյուրների շարքին են դասվում նաև Խորհրդային Ադրբեջանի կենտրոնական վիճակագրական վարչության տեղեկագրերը: Հետազոտության համար օգտագործվել են Ռուսաստանի Դաշնության տնտեսության պետական արխիվի, Հայաստանի ազգային և Արցախի Հանրապետության պետական արխիվներում պահպանվող վիճակագրական փաստաթղթերը,

օգտագործվել են նաև սկզբնաղբյուրային արժեք ունեցող վիճակագրական այլ նյութեր: Ատենախոսը գիտական բարձր մակարդակով ներկայացնում և վերլուծում է թեմայի աղբյուրագիտական հիմքը, գիտական ուսումնասիրվածության աստիճանը:

Ատենախոսության առաջին՝ **«Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը 1920-ական թթ. առաջին կեսին»,** գլխում ներկայացված է Լեռնային Ղարաբաղի բնակչության ժողովրդագրությունն ըստ 1921 թ. գյուղատնտեսական մարդահամարի տվյալների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը պայմանավորող գործոնները 1920-ական թթ. առաջին կեսին: Ուսումնասիրելով հիմնահարցերը, ատենախոսը հանգում է այն ճիշտ եզրահանգումներին, որ 1921 թ. գյուղատնտեսական մարդահամարը առանձնանում էր կազմակերպական և բովանդակային մի շարք թերություններով, որոնց պատճառով այդ վիճակագրության տվյալները կարող են ընդունելի լինել որոշակի վերապահումներով: Ատենախոսը նաև եզրակացնում է, որ մարդահամարի արդյունքները ցույց տվեցին, որ Լեռնային Ղարաբաղի գյուղական բնակչությունն այդ շրջանում գրեթե ամբողջապես միատարր հայկական էր:

Ատենախոսության երկրորդ՝ **«Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդագրական պատկերը 1920-ական թթ. երկրորդ կեսին-1930-ական թթ.»,** գլխում ներկայացված են ԼՂԻՄ բնակչության ժողովրդագրական հատկանիշներն ըստ 1926 թ. և 1939 թ. համամիութենական մարդահամարների տվյալների, նաև ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնները 1920-ական թթ. երկրորդ կեսին-1930-ական թթ.: Ատենախոսը նշում է, որ 1926 թ. մարդահամարի տվյալներով մարզի էթնիկ կազմը շարունակում էր գերազանցապես հայկական մնալ: Թվաքանակով երկրորդ էթնիկ հանրույթը թյուրք-ադրբեջանցիներն էին, ապա ռուսները: Համամիութենական երկրորդ՝ 1939 թ. մարդահամարի տվյալներով մարզի բնակչությունը նախորդ մարդահամարի համեմատությամբ նկատելիորեն ավելացել էր: զգալի աճ էր արձանագրել հատկապես քաղաքային բնակչությունը, մարզի էթնիկ պատկերը շարունակում էր հայկական մնալ: Իրենց թվաքանակով հայ բնակչությանը դարձյալ հաջորդում էին ադրբեջանցիները և ռուսները:

1920-ական թթ. երկրորդ կեսին և 1930-ական թթ. ինքնավար մարզի ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնների թվում ատենախոսը նշում է համամիութենական սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական գործընթացները, մասնավորապես՝ գյուղատնտեսության կոլեկտիվացումը, արդյունաբերացումը և 1930-ական թթ. վերջերի զանգվածային բռնաճնշումները: Գործոնների երկրորդ խմբում հեղինակն իրավացիորեն նշում է ադրբեջանական իշխանությունների կողմից իրագործվող ԼՂԻՄ

վարչատարածքային փոխակերպումների միջոցով մարզի տարածքի կրճատումը, մի շարք հայկական բնակավայրերի բռնակցումը հարևան ադրբեջանական վարչամիավորներին, թյուրքական բնակավայրերի ձևավորումը, վերջիններիս սոցիալ-տնտեսական արտոնությունների հատկացումը, տնտեսական «հիմնավորումներով» մարզի հայ բնակչության վերաբնակեցումները և այլն:

Ատենախոսության երրորդ՝ **«Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդագրական պատկերը 1940-1950-ական թթ.»,** գլխում ներկայացված են հիշյալ ժամանակաշրջանում ԼՂԻՄ ժողովրդագրական պատկերը պայմանավորող գործոնները, ԼՂԻՄ ժողովրդագրական հատկանիշներն ըստ 1959 թ. համամիութենական մարդահամարի տվյալների և ԼՂԻՄ-ում Խորհրդային Ադրբեջանի իրականացրած ժողովրդագրական ինժեներիայի քաղաքականությունը:

Այդ շրջանի ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնների շարքում հեղինակը առանձնացնում է Հայրենական մեծ պատերազմը, 1949 թ. հայ բնակչության աքսորը, 1948-1953 թթ. Խորհրդային Հայաստանից ադրբեջանական բնակչության վերաբնակեցումը ԼՂԻՄ-ում: Նաև Խորհրդային Ադրբեջանի ժողովրդագրական քաղաքականության դրսևորումները, որոնք նպատակ էին հետապնդում փոխելու ինքնավար մարզի էթնոժողովրդագրական պատկերը՝ ԼՂԻՄ-ից երիտասարդ, վերարտադրողական տարիքի հայ բնակչության լայնածավալ արտագաղթը խթանելու միջոցով: Այդ ամենի արդյունքում արդեն 1959 թ. մարդահամարի տվյալներով ինքնավար մարզի բնակչությունը զգալիորեն նվազել էր նախապատերազմյան մարդահամարի համեմատությամբ: Այդուհանդերձ, էթնիկ կազմով ԼՂԻՄ-ը թեև շարունակում էր ճնշող մեծամասնությամբ մնալ հայկական, սակայն 1926 թ. համեմատ մարզի էթնիկ կազմում արձանագրվել էր ադրբեջանական բնակչության կայուն աճ:

Ատենախոսության առավել հաջողված հատվածներից է երրորդ գլխի երրորդ ենթագլուխը՝ **«Խորհրդային Ադրբեջանի ժողովրդագրական ինժեներիայի քաղաքականությունը ԼՂԻՄ-ում»:** Հեղինակը ցույց է տալիս, որ մարզում ժողովրդագրական ինժեներիայի քաղաքականության իրականացմամբ Ադրբեջանը փորձում էր վերացնել երկրամասի էթնիկ միատարրությունը, նվազեցնելով հայության թվաքանակը ավելացնել ադրբեջանցիներինը և այլն: Արդյունքում՝ ամրապնդել սեփական իշխանությունը ԼՂԻՄ-ում:

Ատենախոսության արժանիքներից է նաև այն, որ հետազոտության բոլոր գլուխներն ու ենթագլուխները ավարտվում են ատենախոսի սեփական ամփոփումներով:

Եզրակացություններում հեղինակը հանրագումարի է բերել ատենախոսության առանցքային դրույթները, համոզիչ եզրահանգումներով ամփոփել ուսումնասիրության հիմնական արդյունքները:

Գիտական բարձր մակարդակով և գրեթե անթերի է կազմված ատենախոսության օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը, արժեքավոր է նաև ատենախոսությունում ներկայացված հավելվածը:

Անկասկած հաջողված այս ատենախոսությունը զերծ չէ նաև որոշ թերություններից, բացթողումներից, ուստի ներկայացնենք մեր նկատառումներն ու առաջարկները, որոնք, կարծում ենք, օգտակար կլինեն ատենախոսի համար գիտական հետագա գործունեության ընթացքում, նաև՝ ատենախոսությունը որպես մենագրություն հրատարակելու դեպքում:

1. Ատենախոսության ներածությունում և 1-ին գլխում ներկայացնելով մինչև 1923 թ. հուլիս ընկած ժամանակահատվածի իրադարձությունները հեղինակը Լեռնային Ղարաբաղի երկրամասը երբեմն նշում է որպես ԼՂԻՄ, մինչդեռ ինքնավարությունը հաստատվել է միայն 1923 թ. հուլիսի 7-ին, այդ վրիպակները պետք է վերացնել (էջ 5, 10, 24–26 և այլն):

2. Գտնում ենք, որ ատենախոսությունում հեղինակն առավել հանգամանալից պետք է ներկայացներ և վերլուծեր ԼՂԻՄ-ի կարգավիճակը ԽՍՀՄ ազգային-պետական կառուցվածքում: Հարկ է ընդգծել, որ Լեռնային Ղարաբաղի՝ որպես ինքնավար մարզ, կարգավիճակը բավականին բարձր կարգավիճակ էր: ԽՍՀՄ ժամանակաշրջանում նրա կազմում ստեղծվել է ընդամենը 8 ինքնավար մարզ: Այդ կարգավիճակը զիջում էր միայն միութենական ազգային հանրապետության և նրա կազմում գտնվող ինքնավար հանրապետության կարգավիճակին: Բացառապես այդ կարգավիճակի շնորհիվ էր, որ խորհրդային տարիներին Ղարաբաղի հայությանը հաջողվեց դիմակայել Ադրբեջանի սադրանքներին և ազգային խտրականության քաղաքականությանը, ինչը հատկապես դրսևորվում էր մարզի ժողովրդագրական գործընթացներում: Արցախը զերծ մնաց Նախիջևանի ճակատագրից, իսկ արցախահայությունը հնարավորություն ստացավ հռչակել իր անկախ պետականությունը:

3. Կարծում ենք, աշխատանքն անչափ կշահեր, եթե հեղինակը փաստագրված զուգահեռներ անցկացներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերի և Ադրբեջանական ԽՍՀ հայկական կամ հայաբնակ այլ երկրամասերի հայության ժողովրդագրական պատկերի հետ, կատարեր համեմատություններ և վերլուծություններ:

4. Հեղինակը թեև օգտագործել է մեծ թվով պատմագիտական գրականություն, այդ թվում՝ օտարալեզու, այդուհանդերձ, չպետք է անտեսվեին ՀՀ ԳԱԱ պատմության

ինստիտուտի հրատարակած Հայոց պատմության բազմահատորյակի 4-րդ հատորի 1-ին և 2-րդ գրքերի՝ ատենախոսության թեմային առնչվող հատվածները: Մասնավորապես, Հ. Ալեքսանյանի հեղինակած՝ «Հայերի տեղաբաշխումը Խորհրդային Ադրբեջանում և Վրաստանում» (Հայոց պատմություն. հատոր IV. գիրք առաջին (Նորագույն ժամանակաշրջան. 1918-1945 թթ., Ե., 2010, էջ 605-608), Ա. Վիրաբյանի՝ «Ադրբեջանական հակահայ նոր խարդավանքները», Հ. Աբրահամյանի՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը և այլն (Հայոց պատմություն, հատոր IV, գիրք երկրորդ (Նորագույն ժամանակաշրջան. 1945-1991 թթ.), Ե., 2016 էջ 100-106, 279-288):

Ամփոփենք, մեր կողմից նշված բացթողումները չեն նսեմացնում ատենախոսի կատարած բարեխիղճ աշխատանքի գիտական բարձր արժեքը: Ատենախոսությունը հիմնահարցին նվիրված առաջին ամբողջական ուսումնասիրությունն է, այն շարադրված է պատմագիտական գրականության, արխիվային նյութերի ու փաստերի, վիճակագրական տվյալների համալիր քննության, համադրության և անկողմնակալ վերլուծության հիման վրա: Հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում ու սեղմագրում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսությունը պարունակում է գիտական նորույթ, համապատասխանում է Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտական թվանիշին և լիովին բավարարում է նշված աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Ուստի՝ միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող 004 մասնագիտական խորհրդի առջև՝ ատենախոս Գայանե Սլավիկի Հովհաննիսյանի շնորհելու իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կ.Հ. Խաչատրյան
18.05.2023թ.

Պ.գ.դ., պրոֆ. Կ.Հ. Խաչատրյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական քարտուղար, պ.գ.թ., դոցենտ
Հ.Ղ. Մուրադյան
19.05.2023թ.